յարքունեաց գանձուցն չինեցին անդ զեկեղեցիս, եւ արկցին զպարիսպս բարձունս շուրջանակի, և ի ներքոյ զսրահս և զսենեակս առանձնականս արանց եւ կանանց, եւ ոռճիկք նոցա ի գալն եւ ի գնալն յարքունուստ լիցի...» (Հան. էջ 78-79)։

«Մինչև ի գալն աստուածասէր և բարեպաշտ թագուհւոյն սրբոյն Հեղինեայ ի խնդիր կենսատու խաչին, և խոշտանկեալ զհրէայսն մեծաւ հոգունակութեամբ եգիտ զխաչն աստուածեան, և լցաւ անճառ ցնծութեամբ։ Վասն որոյ սկիզբն արար սքանչելակերտ շինուածոյ սրբոյ և Աշխարհամատրան տաճարիս, սկսեալ ԳՃԻԶ (326) յամի տեառն, մինչեւ ՅԳՃԼԷ (337) ամն կատարեցաւ։ Եւ ի սեպտեմբերի ԺԳ-ին՝ աբարին գնաւակատիս Սրբոյ Յարութեան և Գողգոթային, և ի ԺԴ-ին վերացոյց հայրապետն զսուրբ խաչն աստուածեան ի տեսիլ ամենեցուն առ ի պահպանումն հաւատացելոց, ըստ աւանդութեան սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն, որպէս և գրեալ իսկ է Յայսմաւուրն» (Հան. էջ 163)։

«... Յայնմ ժամանակի հաւատացեալքն շրջափակեցին զվայրս զայս՝ (Ս. Աստուածածնի Գերեզմանի եկեղեցիին տեղը) որ էր իբրև զայր մի ի ձորն՝ հրամանաւ առաքելոց, և պատուէին հանապազ գալով և աղօթելով աստ մինչև ցժամանակս մեծի դըշխոյին սրբոյն Հեղինեայ, որ եկեալ ի հիմանէ շինեաց զեկեղեցիս, որպէս և շինեաց զսուրբ Յարութիւնն և զայլ տնօրինական տեղիս։ Եւ ոչ միայն զեկեղեցիս զայս որ այժմ երևի, այլ ի վերայ սորին հանգոյն սմին եկեղեցի և վանք հուչակաւոր, յորում կուսանք մաքուրք՝ բնակէին և սպասաւորէին սրբոյ չիրմի ամէնօրհնեալ սուրբ Աստուածածնին։ Երեք դրունքն